

Հ Ա Մ Ա Գ Ո Ր Ծ Ա Կ Ց Ո Ւ Թ Յ Ա Ն Հ ՈՒ Շ Ա Գ Ի Ր

ք. Գավառ

30 մարտի 2013 թ.

«Գավառի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Համալսարան)՝ ի դեմս ռեկտոր Ռուզաննա Խաչիկի Հակոբյանի, ով գործում է Համալսարանի կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Գեղարքունիքի մարզի Ակունքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Դպրոց)՝ ի դեմս տնօրեն Սարգիս Հրանտի Արշակյանի, ով գործում է Ակունքի միջնակարգ դպրոցի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), ելնելով Հայաստանի Հանրապետության կրթական համակարգին ներկայացվող արդի պահանջներից, Ակունքի միջնակարգ դպրոցի սովորողներին՝ նրանց հակումներին, կարողություններին, նախասիրություններին համապատասխան ապագա մասնագիտության ընտրության հարցում աջակցելու, Համալսարանում գործող մասնագիտությունների վերաբերյալ սովորողների մոտ պատկերացումներ և կողմնորոշում ձևավորելու նպատակով կնքեցին սույն Հուշագիրը հետևյալի մասին.

*1. Հուշագրի առարկան*

Կողմերը պարտավորվում են համագործակցել՝ Դպրոցի սովորողների իմացական, ստեղծագործական, վերլուծական կարողությունները զարգացնելու, Համալսարանում ուսուցանվող մասնագիտություններին նրանց ծանոթացնելու և այլ ուղղություններով:

*2. Համալսարանը պարտավորվում է՝*

- 2.1. Դպրոցին անհատույց տրամադրել ուսումնամեթոդական ձեռնարկներ, գիտական պարբերականներ, ուղեցույցեր, այլ նյութեր,
- 2.2. Մեթոդական աջակցություն ցուցաբերել Դպրոցի ուսուցիչներին, նրանց համար կազմակերպել կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներ,

- 2.3. Յուրաքանչյուր տարի Դպրոցի աշակերտների համար կազմակերպել «Բաց դռների օրեր» և ճանաչողական այցեր Համալսարան՝ նրանց հնարավորություն ընձեռելով հանդիպելու Համալսարանի ղեկավարության և պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ՝ ծանոթանալու Համալսարանի ֆակուլտետներին, ամբիոններին, ուսուցանվող մասնագիտություններին և ուսումնառության առկա հնարավորություններին,
- 2.4. Դպրոցի ավարտական դասարանների աշակերտների համար իրականացնել տեղեկատվական աշխատանք՝ նախապատրաստելով բուհ ընդունվելուն,
- 2.5. Դպրոցի հետ համատեղ՝ ավարտական դասարանների լավագույն աշակերտների համար կազմակերպել օլիմպիադաներ, այլ միջոցառումներ,
- 2.6. Դպրոցի ուսուցիչների որակավորման բարձրացմանը նպաստելու նպատակով նրանց մասնակից դարձնել Համալսարանում կազմակերպվող գիտաժողովներին և սեմինարներին:

### *3. Դպրոցը պարտավորվում է՝*

- 3.1. Դպրոցում կազմակերպել Համալսարանի պրոֆեսորադասական անձնակազմի և սովորողների հանդիպումներ, ուսումնակրթական աշխատանքներ, զրույցներ, բանավեճեր և քննարկումներ, գրավոր աշխատանքներ, թեմատիկ մրցույթներ և այլ միջոցառումներ, որոնք կնպաստեն սովորողների մասնագիտական կողմնորոշմանը,
- 3.2. Ուսումնական գործընթացում ըստ անհրաժեշտության ներգրավել նաև Համալսարանի մասնագետներին՝ նրանց համար ապահովելով բնականոն գործունեության պայմաններ,
- 3.3. Համալսարանի ներկայացուցիչների հետ հանդիպումներին հրավիրել նաև Դպրոցի աշակերտների ծնողներին՝ Համալսարանի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու նպատակով:

### *4. Հուշագրի գործողության ժամկետը, փոփոխումը, լրացումը և գործողության դադարեցումը*

- 4.1. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է 5 տարի ժամկետով,



